# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգի մասին:

/զեկուցող՝ Գ. Մովսիսյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի ''Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին'' թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

3. 2020 թվականի Արտիմետ համայնքի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցի հաստատման մասին:

/զեկուցող՝ Գ. Մովսիսյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվության մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

/զեկուցող՝ Հ. Միրզախանյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին:

/զեկուցող՝ Ա. Հովհաննիսյան/

7. Գումար հատկացնելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

8. Արտիմետ համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման նպատակով համաֆինանսավորման գումար վճարելու մասին:

/զեկուցող՝ Վ. Միրզախանյան/

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 2 Ն

### ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ,, ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, ''Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով.

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի ''Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին'' թիվ 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ վարչական բյուջե 3025.3 հազ. դրամ, ֆոնդային բյուջե 9428.1 հազ. դրամ: Վարչական բյուջեի ազատ մնացորդը նախատեսել նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված պարտավորությունների կատարմանը: Ընդամենը վարչական բյուջե 3025,3 հազ դրամ, ֆոնդային բյուջե 9428,1 հազ. դրամ:

բ. Հողի հարկը ավելացնել 3000.0 հազ. դրամ:

գ.Գույքահարկ փոխադրամիջոցներից 4000.0 հազ. դրամ:

դ. Հողի օտարումից եկամուտ ավելացնել 10000.0 հազ. դրամ

Բաշխել ըստ ծախսերի՝

Բաժին 04 խումբ 3 դաս 2   5112 հոդվածին 6000.0 հազ. դրամ

Բաժին 04 խումբ 3 դաս 6   5129 հոդվածին 6000.0 հազ. դրամ

Բաժին 01 խումբ 1 դաս 1   5122 հոդվածին 600.0 հազ. դրամ

Բաժին 01 խումբ 1 դաս 1   5113 հոդվածին 6328.1 հազ. դրամ

Բաժին 04 խումբ 2 դաս 4   4657 հոդվածին 10025.3 հազ. դրամ

Բաժին 09 խումբ 1 դաս 1   5122 հոդվածին 500.0 հազ. դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 3

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2020 թվականի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի
ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1-ԻՆ ՆԻՍՏ - ՓԵՏՐՎԱՐԻ 10

2-ՐԴ ՆԻՍՏ - ԱՊՐԻԼԻ 10

3-ՐԴ ՆԻՍՏ - ՀՈՒՆԻՍԻ 10

4-ՐԴ ՆԻՍՏ - ՕԳՈՍՏՈՍԻ 10

5-ՐԴ ՆԻՍՏ - ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12

6-ՐԴ ՆԻՍՏ - ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 4

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի
ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# 2019 Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի փետրվարի 6-ին Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությանը ներկա էին՝ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Հովհաննիսյանը, Արտիմետ համայնքի ավագանին և համայնքի բնակիչներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարը ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավրի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

## 1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2019 թվականի ընթացքում համայնքապետարան է դիմել 83 բնակիչ: Դիմումներում բարձրացվել են սոցիալական, հողային, շինարարության, ֆինանսական և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել լուծումներ: Համայնքապետարանը համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր իր միջնորդությամբ հանդես է եկել, անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում:

Համայնքում 2019 թվականի ընթացքում կայացել է ավագանու 10 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել է 47 որոշում, որոնք ներկայացվել է մարզպետարան: Համայնքապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի որոշումներ և կարգադրություններ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Համայնքապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության:

## 2. Ֆինանսների բնագավառում

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Հողի հարկ- պլանը -12250.0 կատարվել է 9947.6 հազ. դրամ
2. Գույքահարկ – պլանը- 6650.0 կատարվել է 7567.8

3. Դոտացիա - պլանը - 29229.5 կատարվել է 29229.5
4. Տեղական տուրքեր - պլանը - 64.0 կատավերլ է 64.0
5. Հողի վարձակալության վճար - պլանը - 385.0 կատարվել է 421.4
6. Աղբահանության վճար - պլանը – 1524.0 կատարվել է 608.6
7. Մանկապարտեզի ծնող վճար – պլան -2500.0 կատարվել է 3037.4

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Տեղական ինքնակառավարում - պլանը- 33225.0 կատարվել է - 29425.2
2. Նախադպրոցական ուսուցում - պլանը - 17800.0 կատարվել է -17240.5
3. Սոց. օգնություն - պլանը -2000.0 - կատարվել է 1975.0
4. Ընդհանուր բնույթի ծառայություն – պլանը – 8402.0 կատարվել է- 6194.5
5. Դաշտամիջյան ճանապարհի խճապատ. – պլանը – 1000.0 – կատարվել է -1000.0
6. Համայնքի մանկապարտեզի համար վարչ. սարքավ. - 500.0
7. Համայնքի երկու փողոցում ջրագծի անցկ. – պլանը-1000.0 – կատարվել է -430.0
8. Համայնքի 10 փողոնների լուսավորություն – 1000.0 կատարվել է 1000.0

Համայնքապետարանը և նրա ենթակա կառույցի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակահատվածում պարքեր չունի:

## 3. Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

## 4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի , գույքահարկի գծով հարկերի հավաքագրման ուղղությամբ: Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Համայնքապետարանը կազմակերպել է դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ:

## 5. Կոմունալ տնտեսություն

Համայնքի աղբաթափման աշխատանքները կազմակերպվում է համայնքապետարանի աշխատողի կողմից շաբաթը մեկ անգամ և վարձատրվել է 1544.3 հազ. դրամ:

Գյուղապետարանը մշտապես աջակցում է էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման ծառայությունները իրականացնող աշխատակիցներին:

## 6. Կրթություն, մշակույթ և սպորտ

Համայնքապետարանը համայնքի մանկապարտեզին հատկացրել է 15791.6 հազ. դրամ սուբսիդիա՝ աշխատավարձի և այլ ծախսեր կատարելու համար:

Համայնքում գործում է գրադարան 5332 կտոր գրականությամբ, գործում է պարի խմբակ:

Համայնքի բնակիչները իրենց ձմեռային առօրյան անցկացնում են համայնքապետարանի շենքի ջեռուցվող դահլիճում՝ զբաղվելով նարդի, շախմատ, շաշկի խաղերով, նույնիսկ կազմակերպվում է շախմատի առաջնություն հարևան գյուղերի հետ:

Համայնքում գործում է <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է խնամքից դուրս մնացած երեխաների հայտնաբերման աշխատանքները:

## 7. Գյուղատնտեսության բնագավառում

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի վերաբերյալ հաշվետվություններ: Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

համայնքապետարանի շենքի ջեռուցվող դահլիճում զբաղվելով նարդի, շախմատ,

## 8. Հիմնախնդիրներ

1. Րաֆֆի և Հերացի փողոցների գազատարի կառուցում
2. Կոլեկտրի 2 կմ հատվածի մաքրում
3. Խորքային հորի հորատում
4. Մշակույթի շենքի կառուցում

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 5

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով,

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2020 թվականի սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի
ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ

# ՍԽԵՄԱ

1. Արտիմետ համայնքում առկա է 416 տնտեսություն , բնակչության թիվը 2170 մարդ, աղբահանվող փողոցների թիվը 19:
2. Համայնքում առաջացող կենցաղային աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով տարեկան կազմում է 720 խմ:
3. Սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 50 հա: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են համայնքի ամբողջ տարածքում շաբաթը երկու անգամ՝ հինգշաբթի և կիրակի օրերին:
4. Աղբահանության համար վարձավճարի դրույքաչափը հաստատվել է համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 37 –Ն որոշմամբ, որի համաձայն համայնքի բնակիչներից մեկ շնչի համար գանձվում է 50 դրամ , իսկ իրավաբանական անձանց 1 քմ –ի համար 50 դրամ:
5. Հավաքված աղբը անմիջապես տեղափոխվում է Արտիմետի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:
6. Համայնքում տեղակայված հուշարձանի տարածքում սանիտարական մաքրման աշխատանքները կատարվում է համայնքապետարանի աշխատակցի կողմից:
7. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ 2020 թվականի համար 1 976 000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 6

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բյուջեի 2019 թվականի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի
N 6 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի վարչական բյուջեով պլանավորված եկամուտները կազմում են

*Հողի հարկ - 12250000դրամ
*Գույքահարկ - 6650000դրամ
*Վարձակալական հողի վճար -385000դրամ
*Տեղական վճար -4000000դրամ
*Տեղական տուրքեր -64000դրամ
*Դոտացիա -29229500դրամ
ընդամենը -52578500դրամ

2019 թ. հողի իրացումից մուտքեր - 128650 դրամ

2019 թվականին կատարվել է եկամուտների հավաքագրում

Հողի հարկ - 9947547 դրամ
*Գույքահարկ - 7567756 դրամ
*Վարձակալական հողի վճար -421464 դրամ
*Տեղական վճար -3646070 դրամ
*Տեղական տուրքեր -64000 դրամ
*Դոտացիա -29229500 դրամ
*այլ եկամուտ -61000 դրամ
ընդամենը -50937337 դրամ

Վարչական բյուջեի 2019 թվականի կատարված ծախսերը

- Աշխատավարձ և հավելավճար -23453297 դրամ
- Ծառայություններ և ապրանք. ձեռք բերում -6194560 դրամ
- Սուբսիդիա <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին -15791652 դրամ
- Սոց օգնություն -1975000 դրամ
- Այլ ծախսեր -497500 դրամ
- Ընդամենը -47912009 դրամ

2019 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերը

- Շենք և շինության կառուցում - 1938900 դրամ
- Շենք և շինության վերանորոգում -990000 դրամ
- Վարչական սարքավորում -708000 դրամ
- Ընդամենը 3636900 դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 7

### ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում մահ գրանցվելու դեպքում տվյալ ընտանիքին տրամադրել 50 000 /հիսուն հազար/ դրամ գումար:

2.Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում յուրաքանչյուր երեխա ծնվելու դեպքում ընտանիքին տրամադրել 25 000 /քսանհինգ հազար/ դրամ գումար:

3. Մարտի 8-ի կապակցությամբ աղանդերային հյուրասիրություն կազմակերպելու համար տրամադրել 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ գումար:

4. Այսն որոշումն ուժի մեջ է, մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
0231-4-76-01, artimet.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 8

### ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ջրային կոմիտեի ''Ջրային տնտեսության ԾԻԳ'' պետական հիմնարկին համաֆինանսավորման նպատակով վճարել 3 000 000 /երեք միլիոն/ դրամ, համայնքի տարածքում 2742 գծմ տարածք կիսախողովակներ անցկացնելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ

ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ